600.0344.23.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2020 թվականի №344Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՐԻԿ ՀՐԱՆՏԻ ԱՐԱՋՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի սեպտեմբերի 4-ի №04/11.1/4851-2020 գրությամբ ներկայացված տեղեկությունն առ այն, որ 2500-2520ՄՀց/2620-2640ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում իրականացված հետազոտումների արդյունքում արձանագրվել են խանգարումներ Արթիկ քաղաքի Գարեգին Նժդեհի 3 հասցեում տեղադրված հանրային հաղորդակցության ցանցի ալեհավաքից, որը օգտագործվում էր անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանի կողմից,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/3861-2020 գրությունը, որին ի պատասխան անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանը հայտնել է, որ հայտնաբերված թերությունները վերացվել են և հանրային հաղորդակցության ցանցի աշխատանքը տեղափոխվել է 2400-2483ՄՀց թույլատրելի ռադիոհաճախականությունների տիրույթ,

գ) որ իրավասու պետական մարմնի կողմից ներկայացված տեղեկատվությամբ և անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 2500-2520ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 2500-2520ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գարիկ Հրանտի Արաջյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՐԵԱՄՅԱՆ**

ք. Երևան
23 սեպտեմբերի 2020թ.